

**«Նոր Հորիզոն» ՈՒՎԿ ՍՊԸ  
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ  
ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (Ձև 5)**

01 հունվարի 2007թ.-ից մինչև 31 դեկտեմբերի 2007թ.

**Ծանոթագրություն 1**

**Իրավական դաշտ**

«Նոր Հորիզոն» ՈՒՎԿ ՍՊԸ-ն (վարկային կազմակերպություն) ստեղծվել է «Հորիզոն» հիմնադրամի (այսուհետև՝ Հիմնադիր) որոշմամբ՝ 2006թ-ին: Վարկային կազմակերպության հիմնական գործունեությունը՝ վարկերի և փոխառությունների տրամադրումն է, իր հաճախորդներին բիզնես տեղեկատվության տրամադրումն է, ինչպես նաև «Վարկային Կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի և ենթաօրենսդրական իրավական ակտերով ունիվերսալ վարկային կազմակերպությունների համար թույլատրված գործունեության այլ տեսակների միջոցով մատուցելու ծառայություններ ՀՀ բնակչությանը, բնակչության եկամուտների ավելացման, սոցիալական վիճակի բարելավման, գործազրկության և միգրացիայի կրճատման նպատակներով: Վարկային կազմակերպությունը իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետություն, Երևան, Կոմիտաս 54 հասցեով տեղակայված գլխամասային գրասենյակի միջոցով: Տարվա ընթացքում վարկային կազմակերպության աշխատակիցների միջին թիվը կազմում էր 30:

Ներկայացված հաշվապահական հաշվեկշիռն արտացոլում է վարկային կազմակերպություն ֆինանսական դրության և գործառնությունների վրա տնտեսական իրավիճակի ազդեցության դեկավարության գնահատականը:

**Ծանոթագրություն 2**

**Հաշվապահական ստանդարտներ**

**Պատրաստման հիմունքներ**

**Համապատասխանության մասին հայտարարություն:**

Հաշվապահական հաշվառման իր գրառումները վարկային կազմակերպությունը վարում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան: Ներկայացվող հաշվապահական հաշվեկշիռը պատրաստվել է հաշվապահական հաշվառման այդ գրանցումների հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտների (ՀՀՀՀՍ) պահանջների համապատասխանելու նպատակով:

**Չափման և ներկայացման արժույթ**

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է («դրամ»): Գեկավարությունը որպես վարկային կազմակերպության չափման արժույթ է սահմանել դրամը, քանի որ վերջինս արտացոլում է վարկային կազմակերպության գործունեության հիմքում ընկած իրադարձությունների և հանգամանքների տնտեսական էությունը: Սույն

հաշվապահական հաշվեկշռի նպատակների համար դրամը հանդիսանում է նաև ներկայացման արժույթ:

Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

#### Անընդհատություն

Ներկայացվող հաշվապահական հաշվեկշիռը պատրաստվել է անընդհատության սկզբունքից ելնելով, որը ենթադրում է ակտիվների իրացում և պարտավորությունների մարում սովորական գործունեության ընթացքում:

Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Հաշվապահական հաշվեկշիռը պատրաստելիս կիրառվել է ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը: Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

#### Արտարժույթով գործարքներ

Արտարժույթով իրականացված գործարքները փոխարկվում են դրամի՝ գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են դրամի այդ ամսաթվի դրությամբ սահմանված փոխարժեքով: Փոխարկման հետևանքով առաջացած արտարժութային տարբերությունները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Արտարժույթով արտահայտված ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները, որոնք ներկայացված են սկզբնական արժեքով, փոխարկվում են դրամի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով:

#### Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Վարկային կազմակերպությունը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ է համարում դրամական միջոցները դրամարկղում և բանկային հաշիվներում տեղաբաշխված մնացորդները:

Հիմնական միջոցներ

#### Սեփական ակտիվներ

Հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ:

#### Վարձակալված ակտիվներ

Գործառնական վարձակալությունը, որի դեպքում վարկային կազմակերպությանը չեն փոխանցվում ակտիվի սեփականության հետ կապված գրեթե բոլոր ռիսկերն ու օգուտները, ծախսագրվում է:

#### Մաշվածություն

Մաշվածությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է հիմնական միջոցի շահագործման հանձնման պահից, իսկ սեփական ուժերով կառուցված

ակտիվների դեպքում՝ վերջիններս կառուցումն ավարտելու և շահագործման հանձնելու պահից: Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են՝

|                            |          |
|----------------------------|----------|
| Շենքեր                     | 20 տարի  |
| Սարքավորումներ             | 2-3 տարի |
| Տնտեսական միջոցներ և գույք | 5 տարի   |
| Փոխադրամիջոցներ            | 5 տարի   |
| Այլ հիմնական միջոցներ      | 5 տարի   |

Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվներ

Վարկային կազմակերպության կողմից ձեռք բերված ոչ նյութական ակտիվները ներկայացված են ձեռք բերման արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան: Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են՝

|                       |         |
|-----------------------|---------|
| Համակարգչային ծրագրեր | 10 տարի |
|-----------------------|---------|

Ամորտիզացիա

Ամորտիզացիան ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության գնահատված ժամկետը կազմում է 10 տարի:

Արժեզրկում

Վարկային կազմակերպության ակտիվների, բացառությամբ հետաձգված հարկային ակտիվների, հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ, որոշելու՝ արդյոք առկա է որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվը կարող է արժեզրկված լինել: Այդպիսի հայտանիշի գոյության դեպքում, ակտիվների փոխհատուցվող գումարները գնահատվում են:

Արժեզրկումից կորուստը ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա փոխհատուցվող գումարը:

Հարկում

Շահույթի կամ վնասի գծով տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված տարրերին, որի դեպքում շահութահարկը ճանաչվում է սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկը տարվա շահութահարկի գծով ակնկալվող վճարման ենթակա հարկի գումարն է, որը հաշվարկվում է կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ և նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները:

Հետաձգված հարկերը հաշվարկվում են օգտագործելով հաշվեկշռային պարտավորության մեթոդը՝ հիմնվելով ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակներով օգտագործվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակով օգտագործվող գումարների ժամանակավոր տարբերությունների վրա: Ժամանակավոր տարբերություններ չեն սահմանվում հարկման նպատակով չնվազեցվող գուդվիլի, հաշվապահական հաշվառման կամ հարկվող շահույթի վրա ազդեցություն չունեցող ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչման համար, ինչպես նաև դուստր

ընկերություններում, մասնաճյուղերում և ասոցիացված կազմակերպություններում ներդրումների հանդեպ, որտեղ մայր կազմակերպությունը կարող է վերահսկել ժամանակավոր տարբերությունների հակադարձման ժամկետները, և հավանական է, որ ժամանակավոր տարբերությունը չի հակադարձվի մոտ ապագայում: Հետաձգված հարկերի գումարը հիմնված է ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքի իրացման կամ մարման ակնկալվող մեթոդի վրա՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկային ակտիվը ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ առկա կլինի հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները, չօգտագործված հարկային վնասները և արտոնությունները: Հետաձգված հարկային ակտիվները նվազեցվում են այնքանով, որքանով հավանական չէ, որ համապատասխան հարկային օգուտը կիրացվի:

### Ֆինանսական գործիքներ

Կազմակերպությունը ֆինանսական ակտիվները և պարտավորություններն իր հաշվեկշռում ճանաչում է այն դեպքում, երբ նա դառնում է գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները սկզբնական ճանաչման ժամանակ չափվում են սկզբնական արժեքով, որն իրենից ներկայացնում է դրանց դիմաց տրված կամ ստացված փոխհատուցման իրական արժեքը՝ համապատասխանաբար գումարած կամ հանած գործարքի հետ կապված ցանկացած ծախսումները:

Կազմակերպության կողմից ֆինանսական ակտիվները դասակարգվում են հետևյալ կատեգորիաների. առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվներ, վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ, վարկեր և դեբիտորական պարտքեր, մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ:

Ֆինանսական գործիքների իրական արժեքը հիմնված է դրանց գնանշված շուկայական գների վրա: Եթե գնանշված շուկայական գինը առկա չէ, ապա գործիքի իրական արժեքի որոշվում է գնային մոդելների կամ զեղչված դրամական հոսքերի տեխնիկայի միջոցով:

### Վարկեր և դեբիտորական պարտքեր

Վարկերը և դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ֆինանսական ակտիվներն են, որոնք ստեղծվում են կազմակերպության կողմից ուղղակիորեն պարտապանին դրամ տրամադրելու միջոցով՝ առանց պարտքը վաճառելու մտադրության:

Վարկերը որակվում են որպես չաշխատող, երբ դրանց գծով մայր գումարի և տոկոսների հավաքագրումը կասկածելի է դառնում: Չաշխատող վարկերը կարող են վերադասակարգվել որպես աշխատող, երբ ձեռք է բերվում հիմնավորված համոզվածություն ողջամիտ ժամանակահատվածի ընթացքում պայմանագրով նախատեսված չմարված մայր գումարի և տոկոսների հավաքագրման վերաբերյալ:

Սկզբնական ճանաչումից հետո վարկերը և դեբիտորական պարտքերը հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

**Ծանոթագրություն 3**

Տոկոսային և նմանատիպ եկամուտներ

| ԱՆՎԱՆՈՒՄԸ   | Նախորդ ժամանակաշրջան | Հաշվետու ժամանակաշրջան |
|---|----------------------|------------------------|
| Տոկոսային եկամուտներ բանկային հաշիվներից և ավանդներից   | 13                   | 118                    |
| Տոկոսային եկամուտներ ռեզիդենտ իրավաբանական անձանց և հիմնարկներին տրված վարկերից ու այլ փոխատվություններից | 2,041                | 6,193                  |
| Տոկոսային եկամուտներ ռեզիդենտ ֆիզիկական անձանց տրված վարկերից և այլ փոխատվություններից                    | 20,388               | 106,026                |
| Այլ տոկոսային եկամուտներ  | -                    | -                      |
| Ընդամենը  | 22,442               | 112,337                |

**Ծանոթագրություն 4**

Տոկոսային և նմանատիպ ծախսեր

| ԱՆՎԱՆՈՒՄԸ  | Նախորդ ժամանակաշրջան | Հաշվետու ժամանակաշրջան |
|--|----------------------|------------------------|
| Տոկոսային ծախսեր դրամական շուկայի փոխառությունների և վարկերի դիմաց | -                    | 2,215                  |
| Տոկոսային ծախսեր հաճախորդներից ստացված փոխառությունների դիմաց      | -                    | 15,444                 |
| Այլ տոկոսային ծախսեր   | -                    | -                      |
| Ընդամենը   | -                    | 17,659                 |

**Ծանոթագրություն 5**

Առևտրային նպատակով պահվող ներդրումներից զուտ շահույթ/(վնաս)

| ԱՆՎԱՆՈՒՄԸ  | Նախորդ ժամանակաշրջան | Հաշվետու ժամանակաշրջան |
|--|----------------------|------------------------|
| Առևտրային նպատակով պահվող ներդրումների վաճառքից զուտ շահույթ/(վնաս)        | -                    | -                      |
| Առևտրային նպատակով պահվող ներդրումների վերագնահատումից զուտ շահույթ/(վնաս) | -                    | -                      |
| Ընդամենը   | -                    | -                      |

**Ծանոթագրություն 6**

Վաճառքի նպատակով ներդրումներից զուտ շահույթ/վնաս

| ԱՆՎԱՆՈՒՄԸ  | Նախորդ ժամանակաշրջան | Հաշվետու ժամանակաշրջան |
|--|----------------------|------------------------|
| Վաճառքի համար նախատեսված ներդրումների վաճառքից զուտ շահույթ/(վնաս) | -                    | -                      |
| Վաճառքի համար ներդրումների վերագնահատումից զուտ շահույթ/(վնաս)     | -                    | -                      |
| Ընդամենը   | -                    | -                      |

**Ծանոթագրություն 7**

Արտարժույթային գործառնություններից ստացված զուտ շահույթ/ (վնաս)

| ԱՆՎԱՆՈՒՄԸ  | Նախորդ<br>ժամանակաշրջան | Հաշվետու<br>ժամանակաշրջան |
|--|-------------------------|---------------------------|
| Արտարժույթի վաճառքից ստացված զուտ շահույթ        | -                       | 109                       |
| Արտարժույթի վերագնահատումից ստացված զուտ շահույթ | -                       | (1,837)                   |
| Ընդամենը   | -                       | (1,728)                   |

**Ծանոթագրություն 8**

Այլ գործառնական եկամուտ

| ԱՆՎԱՆՈՒՄԸ                                   | Նախորդ<br>ժամանակաշրջան | Հաշվետու<br>ժամանակաշրջան |
|---|-------------------------|---------------------------|
| Եկամուտներ ստացված տույժերից և տուգանքներից | 21                      | 270                       |
| Ֆակտորինգից ստացված եկամուտներ              | -                       | -                         |
| Արտասովոր եկամուտներ                        | -                       | -                         |
| Այլ եկամուտներ                              | 3,596                   | 402                       |
| Ընդամենը                                    | 3,617                   | 672                       |

**Ծանոթագրություն 9**

Ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին կատարված զուտ մասհանումներ

|   | նախորդ տարի | ընթացիք տարի |
|---|-------------|--------------|
| Տեղաբաշխված բանկային հաշիվների և ավանդների գծով |             |              |
| Սկզբնական մնացորդ                               | -           | 89           |
| Պահուստին մասհանումներ/(հակադարձում)            | 89          | 566          |
| Պահուստի օգտագործում                            | -           | -            |
| Վերջնական մնացորդ                               | 89          | 655          |

|                          | նախորդ տարի | ընթացիք տարի |
|--------------------------|-------------|--------------|
| Տեղաբաշխված վարկերի գծով |             |              |
| Սկզբնական մնացորդ        | -           | 2,848        |
| Պահուստին մասհանումներ   | 2,848       | 3,432        |
| Պահուստի օգտագործում     | -           | -            |
| Վերջնական մնացորդ        | 2,848       | 6,280        |

|   | նախորդ տարի | ընթացիք տարի |
|---|-------------|--------------|
| Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների գծով |             |              |
| Սկզբնական մնացորդ                             | -           | -            |
| Պահուստին մասհանումներ                        | -           | -            |
| Պահուստի օգտագործում                          | -           | -            |
| Վերջնական մնացորդ                             | -           | -            |

|   | նախորդ տարի | ընթացիք տարի |
|---|-------------|--------------|
| Դեբիտորական պարտքերի և այլ ակտիվների գծով                         |             |              |
| Սկզբնական մնացորդ   | -           | -            |
| Պահուստին մասհանումներ/(հակադարձում)                              | -           | 1            |
| Պահուստի (օգտագործում) / նախկինում դուրս գրված ակտիվների վերադարձ | -           | -            |
| Վերջնական մնացորդ   | -           | 1            |

|  | նախորդ տարի | ընթացիք տարի |
|--|-------------|--------------|
| Հաշվեգրված, բայց չհավաքագրված տոկոսների գծով ծախս                  | -           | 7            |
| Ընդամենը ակտիվների հնարավոր կորուստների մասհանումներ/(հակադարձում) | 2,937       | 4,006        |

**Ծանոթագրություն 10**  
Ընդհանուր վարչական ծախսեր

| ԱՆՎԱՆՈՒՄԸ  | Նախորդ<br>ժամանակաշրջան | Հաշվետու<br>ժամանակաշրջան |
|--|-------------------------|---------------------------|
| Հաշվարկված աշխատավարձ և դրան հավասեցված այլ վճարումներ         | 2,645                   | 49,922                    |
| Հատկացումներ պարտադիր սոց ապահովագրության վճարումների գծ       | 618                     | 6,425                     |
| Հարկեր, տուրքեր և պարտադիր այլ վճարներ                         | 2,677                   | 4,762                     |
| Շենքի և այլ հիմնական միջոցների վարձակալության վճար             | 2,150                   | 5,525                     |
| Շենքի տնտեսական պահպանության և անվտանգության ծախսեր            | 1,542                   | 3,275                     |
| Գրասենյակային և տպագրական ծախսեր                               | 774                     | 2,485                     |
| Աուդիտային և խորհրդատվական ծառայությունների գծով ծախսեր        | 3,500                   | 4,000                     |
| Վարկային կազմակերպ ստորավորումների սպասարկման և պահպանման ծախս | 1,286                   | 3,757                     |
| Կապի և հաղորդակցման միջոցների գծով ծախսեր                      | 1,943                   | 6,079                     |
| Ուսուցման ծախսեր   | 234                     | 1,016                     |
| Գործուղման ծախսեր  | -                       | 1,160                     |
| Տրանսպորտային ծախսեր   | -                       | 753                       |
| Ապահովագրության գծով ծախսեր                                    | -                       | 83                        |
| Այլ վարչական ծախսեր  | -                       | 348                       |
| Ընդամենը   | 17,369                  | 89,590                    |

**Ծանոթագրություն 11**  
Այլ գործառնական ծախսեր

| ԱՆՎԱՆՈՒՄԸ  | Նախորդ<br>ժամանակաշրջան | Հաշվետու<br>ժամանակաշրջան |
|--|-------------------------|---------------------------|
| Վճարված տուգանքներ և տույժեր   | -                       | 116                       |
| Գովազդային և ներկայացուցչական ծախսեր   | 51                      | 228                       |
| Ֆակտորինգի գծով ծախսեր   | -                       | -                         |
| Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն ծախսեր  | 945                     | 5,515                     |
| Երաշխիքների, պարտամուրհակների ընդունման, ակրեդիտիվներով և լիազորագրային գործառնությունների գծով ծախսեր | -                       | -                         |
| Արտասովոր ծախսեր   | -                       | -                         |
| Անդամավճարներ  | -                       | 539                       |
| Այլ գործառնական ծախսեր   | 381                     | -                         |
| Ընդամենը   | 1,377                   | 6,398                     |

**Ծանոթագրություն 12**  
Շահութահարկի գծով ծախս

| ԱՆՎԱՆՈՒՄԸ                         | Նախորդ<br>ժամանակաշրջան | Հաշվետու<br>ժամանակաշրջան |
|-----------------------------------|-------------------------|---------------------------|
| Ընթացիկ շահութահարկի գծով ծախս    | 1,066                   | 3,295                     |
| Հետաձգված հարկի գծով փոխհատուցում | (393)                   | (123)                     |
| Ընդամենը                          | 673                     | 3,172                     |



**Ժամանակավոր տարբերությունների գծով հետաձգված հարկի հաշվարկ.**

Հազար ՀՀ դրամ

|   | 2006 | Ֆինանսական արդյունքներով ճանաչված | Սեփական կապիտալում ճանաչված | 2007 |
|---|------|-----------------------------------|-----------------------------|------|
| Կուտակված ծախսեր և այլ պարտավորություններ       | 393  | 123                               | -                           | 516  |
| Ընդամենը հետաձգված հարկային ակտիվ               | 393  | 123                               | -                           | 516  |
| Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություն     | -    | -                                 | -                           | -    |
| Զուտ հետաձգված հարկային ակտիվ/(պարտավորություն) | 393  | 123                               | -                           | 516  |

Հազար ՀՀ դրամ

|   | 2005 | Ֆինանսական արդյունքներով ճանաչված | Սեփական կապիտալում ճանաչված | 2006 |
|---|------|-----------------------------------|-----------------------------|------|
| Կուտակված ծախսեր և այլ պարտավորություններ       | -    | 393                               | -                           | 393  |
| Ընդամենը հետաձգված հարկային ակտիվ               | -    | 393                               | -                           | 393  |
| Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություն     | -    | -                                 | -                           | -    |
| Զուտ հետաձգված հարկային ակտիվ/(պարտավորություն) | -    | 393                               | -                           | 393  |

**Ծանոթագրություն 13**

Դրամական միջոցներ և բանկային հաշիվներ

| ԱՆՎԱՆՈՒՄԸ   | Նախորդ ժամանակաշրջան | Հաշվետու ժամանակաշրջան |
|---|----------------------|------------------------|
| Կանխիկ դրամական միջոցներ և դրամ հավասարեցված վճարային փաստաթղթեր    | -                    | 15,500                 |
| Բանկային հաշիվներ բանկերում   | 8,928                | 65,483                 |
| Տեղաբաշխված բանկային հաշիվների և այլ ավանդների գծով պահուստ(Ծան. 9) | (89)                 | (655)                  |
| Ընդամենը  | 8,839                | 80,328                 |

**Ծանոթագրություն 14**

Առևտրային նպատակով պահվող ֆինանսական ներդրումներ

| ԱՆՎԱՆՈՒՄԸ   | Նախորդ ժամանակաշրջան | Հաշվետու ժամանակաշրջան |
|---|----------------------|------------------------|
| Հայաստանի Հանրապետության պետական արժեթղթեր                | -                    | -                      |
| Այլ երկրների պետական արժեթղթեր                            | -                    | -                      |
| Հայաստանի Հանրապետության ոչ պետական արժեթղթեր             | -                    | -                      |
| Այլ երկրների ոչ պետական արժեթղթեր                         | -                    | -                      |
| Ֆակտորինգային գործառնությունների գծով ստացվելիք գումարներ | -                    | -                      |
| Ածանցյալ գործիքներ  | -                    | -                      |
| Դեբիտորական պարտքերի և այլ ակտիվների գծով պահուստ         | -                    | -                      |
| Ընդամենը  | -                    | -                      |

**Ծանոթագրություն 15**

Բանկերում տեղաբաշխված միջոցներ

| ԱՆՎԱՆՈՒՄԸ                                    | Նախորդ ժամանակաշրջան | Հաշվետու ժամանակաշրջան |
|--|----------------------|------------------------|
| Բանկերում ներդրված ավանդներ                  | -                    | -                      |
| Բանկերին տրված վարկեր և այլ փոխատվություններ | -                    | -                      |
| Վարկերի հնարավոր կորուստների ծածկման պահուստ | -                    | -                      |
| Ընդամենը                                     | -                    | -                      |

**Ծանոթագրություն 16**

Դրամական շուկայում այլ տեղաբաշխումներ

| ԱՆՎԱՆՈՒՄԸ   | Նախորդ ժամանակաշրջան | Հաշվետու ժամանակաշրջան |
|---|----------------------|------------------------|
| Ֆինանսական կազմակերպություններում ներդրված ավանդներ                   | -                    | -                      |
| Ժամկետային ավանդներ ոչ ռեզիդենտ այլ ֆինանսական կազմակերպություններում | -                    | -                      |
| Ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և այլ փոխատվություններ  | -                    | -                      |
| Ավանդների, վարկերի գծով պահուստ                                       | -                    | -                      |
| Ընդամենը  | -                    | -                      |

**Ծանոթագրություն 17**

Հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխատվություններ

| ԱՆՎԱՆՈՒՄԸ  | Նախորդ ժամանակաշրջան | Հաշվետու ժամանակաշրջան |
|--|----------------------|------------------------|
| Ռեզիդենտ իրավաբանական անձանց և հիմնարկներին տրամադրված վարկեր և այլ փոխատվություններ | 20,159               | 32,983                 |
| Ռեզիդենտ ֆիզիկական անձանց տրամադրված վարկեր  | 264,644              | 594,975                |
| Տրամադրված վարկերի գծով պահուստ(Ծան. 9)  | (2,848)              | (6,280)                |
| Ընդամենը   | 281,955              | 621,678                |

**Ծանոթագրություն 18**

Վաճառքի համար նախատեսված ներդրումներ

| ԱՆՎԱՆՈՒՄԸ   | Նախորդ ժամանակաշրջան | Հաշվետու ժամանակաշրջան |
|---|----------------------|------------------------|
| Հայաստանի Հանրապետության պետական արժեթղթեր                | -                    | -                      |
| Այլ երկրների պետական արժեթղթեր                            | -                    | -                      |
| Հայաստանի Հանրապետության ոչ պետական արժեթղթեր             | -                    | -                      |
| Այլ երկրների ոչ պետական արժեթղթեր                         | -                    | -                      |
| Ֆակտորինգային գործառնությունների գծով ստացվելիք գումարներ | -                    | -                      |
| Դեբիտորական պարտքերի և այլ ակտիվների գծով պահուստ         | -                    | -                      |
| Ընդամենը  | -                    | -                      |

**Ծանոթագրություն 19**

Այլ գործառնությունների գծով ստացվելիք գումարներ

| ԱՆՎԱՆՈՒՄԸ  | Նախորդ ժամանակաշրջան | Հաշվետու ժամանակաշրջան |
|--|----------------------|------------------------|
| Ստացվելիք շահաբաժիններ   | -                    | -                      |
| Հավատարմագրային կառավարման գործառնությունների գծով ստացվելիք գումարներ | -                    | -                      |
| Երաշխիքներ   | -                    | -                      |
| Հեջավորման ածանցյալ գործիքներ  | -                    | -                      |
| Ստացվելիք այլ գումարներ  | -                    | -                      |
| Դեբիտորական պարտքերի և այլ ակտիվների գծով պահուստ                      | -                    | -                      |
| Ընդամենը   | -                    | -                      |

**Ծանոթագրություն 20**

Վարձակալության գծով ստացվելիք գումարներ

| ԱՆՎԱՆՈՒՄԸ                                   | Նախորդ ժամանակաշրջան | Հաշվետու ժամանակաշրջան |
|---|----------------------|------------------------|
| Վարձակալության գծով ստացվելիք այլ գումարներ | -                    | -                      |
| Զճանաչված տոկոսային եկամուտներ              | -                    | -                      |

**Ծանոթագրություն 21**

Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ

| ԱՆՎԱՆՈՒՄԸ   | Նախորդ ժամանակաշրջան | Հաշվետու ժամանակաշրջան |
|---|----------------------|------------------------|
| Հայաստանի Հանրապետության պետական արժեթղթեր                  | -                    | -                      |
| Այլ երկրների պետական արժեթղթեր                              | -                    | -                      |
| Հայաստանի Հանրապետության ոչ պետական արժեթղթեր               | -                    | -                      |
| Այլ երկրների ոչ պետական արժեթղթեր                           | -                    | -                      |
| Ֆակտորինգային գործառնությունների գծով ստացվելիք գումարներ   | -                    | -                      |
| Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների արժեզրկման պահուստ | -                    | -                      |

**Ծանոթագրություն 22**

Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

| Շահագործման<br>ակտիվներ             | մեջ<br>գտնվող | Հող,<br>շենք | Գույք,<br>հաշվողական<br>տեխնիկա | Համակարգչային<br>ծրագիր | Այլ<br>հիմնական<br>միջոցներ | Ընդամենը |
|-------------------------------------|---------------|--------------|---------------------------------|-------------------------|-----------------------------|----------|
| <b>Հաշվեկշռային արժեք</b>           |               |              |                                 |                         |                             |          |
| Նախորդ տարվա վերջի տվյալները        | -             | -            | 3,749                           | 3,150                   | -                           | 6,899    |
| Ավելացում                           | 12,313        | -            | 5,382                           | -                       | 1,750                       | 19,445   |
| Վերադասակարգում                     | 70,000        | -            | -                               | -                       | -                           | 70,000   |
| Օտարում                             | -             | -            | -                               | -                       | -                           | -        |
| Ընթացիք տարվա վերջի տվյալները       | 82,313        | -            | 9,131                           | 3,150                   | 1,750                       | 96,344   |
| <b>Մաշվածք</b>                      |               |              |                                 |                         |                             |          |
| Սկզբնական մնացորդ                   | -             | -            | 765                             | 180                     | -                           | 945      |
| Կուտակված ամորտիզացիա               | 3,033         | -            | 2,118                           | 315                     | 49                          | 5,515    |
| Կուտակված արժեզրկում                | -             | -            | -                               | -                       | -                           | -        |
| Վերջնական մնացորդ                   | 3,033         | -            | 2,883                           | 495                     | 49                          | 6,460    |
| <b>Զուտ հաշվեկշռային արժեք</b>      |               |              |                                 |                         |                             |          |
| Նախորդ տարվա վերջ                   | -             | -            | 2,984                           | 2,970                   | -                           | 5,954    |
| Ընթացիկ տարվա վերջ                  | 79,280        | -            | 6,248                           | 2,655                   | 1,701                       | 89,884   |
| <b>Շահագործումից դուրս ակտիվներ</b> |               |              |                                 |                         |                             |          |
| <b>Հաշվեկշռային արժեք</b>           |               |              |                                 |                         |                             |          |
| Նախորդ տարվա վերջի տվյալները        | 70,000        | -            | -                               | -                       | -                           | 70,000   |
| Ավելացում                           | -             | -            | -                               | -                       | -                           | -        |
| Վերադասակարգում                     | (70,000)      | -            | -                               | -                       | -                           | (70,000) |
| Օտարում                             | -             | -            | -                               | -                       | -                           | -        |
| Ընթացիք տարվա վերջի տվյալները       | -             | -            | -                               | -                       | -                           | -        |
